

Վերջում նույն ժամանակահատվածում Հայկական ՍՍՏ ԳԱ պրեզիդենտ, Ակադեմիայի իսկական անդամ Վ. Հ. Համբարձումյանը:

Ընկ. Համբարձումյանը նշեց, որ Ակադեմիայի անդամներն ինստիտուտներում գիտահետազոտական աշխատանքի ընդհանուր մակարդակը ցածր է. Այդ ինստիտուտները չեն կարողացել տալ ժամանակակից սովետական գիտության բարձր մակարդակի վրա կանգնած աշխատանքներ, ինչպիսին մեզնից պահանջում է մեր պարտիան և կառավարությունը: Մենք պետք է մեր քաղաքական աշխատանքներով ևս շմանք Սովետական Միության խոշոր կենտրոնների գիտնականներից, պետք է մրցենք նրանց հետ:

Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել ասպիրանտուրայի վրա: Պետք է առգիրական ընդունել ամենից ավելի խոստովանելից երիտասարդներին, որոնք ունեն գիտա-

կան աշխատողներ զատելալու որոշակի հետաքննարկ:

Հարկավոր է ստեղծել նաև տեխնիկական ակադեմիա բազա, մասնավորապես լաբորատորիաներ:

Մեծ կարևորություն պետք է տալ նաև էքսպեդիցիաների լավ ու մասնավոր կազմակերպմանը:

Ընդհանուր ժողովը լսելով Հայկական ՍՍՏ Գիտությունների Ակադեմիայի վիցե-պրեզիդենտ, Ակադեմիայի իսկական անդամ Վ. Հ. Գուլյանյանի ղեկուցումը Ակադեմիայի 1947 թվականի գիտահետազոտական աշխատանքների արդյունքների և 1948 թվականի հիմնական պրոբլեմների մասին, որոշեց՝ հաճախություն տալ 1947 թվականի ընթացքում կատարված աշխատանքների արդյունքներին և հաստատել 1948 թվականի համար նշված հիմնական պրոբլեմները:

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱ

1946 թ. հունվարի 25-ից մինչև փետրվարի 1-ը լենինգրադում տեղի ունեցավ Անդրկովկասի հնագիտությանը նվիրված գիտական սեսիա, որը հրավիրված էր ՍՍՏ Միության Գիտությունների Ակադեմիայի նյութական Կուլտուրայի Պատմության ինստիտուտի և Պետական էրմիտաժի կողմից: Սեսիային մասնակցում էին Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի և Հյուսիսային Կովկասի գիտնականները, ինչպես և լենինգրադի ու Մոսկվայի՝ Կովկասի հնագիտության հարցերն ուսումնասիրող գիտնականները:

Պլենար և սեկցիոն նիստերում կարդացվեց 37 գիտական զեկուցում, որից 11 զեկուցում՝ նվիրված Հայաստանի հնագիտական հարցերին: Ակադեմիկոս Հովսեփ Օրբելին հանդես եկավ բացման ճառով և «Աղթամարի ռելիեֆներն ու հայկական պալատական շենքերի ճարտարապետական հարդարումը» զեկուցումով: Հայկական ՍՍՏ Գիտությունների Ակադեմիայի թղթակից անդամ Բ. Պիոտրովսկին զեկուցումներ կարդաց «Անդրկովկասի հնագիտական ուսումնասիրության արդյունքների ու պրոբլեմների մասին» և կարդաց «Կարմիր Բլուրի պեղումների մասին: Կարմիր Բլուրի ճարտարապետական հիշատակարանների վերաբերյալ հարակից զեկուցումով հանդես եկավ ճարտարապետական գիտությունների թեկնածու Կ. Հովհաննիսյանը, ՍՍՏ Միության ԴԱ թղթակից-անդամ Կ. Տրեվերը զեկուցում կարդաց Դաունի ամրոցի մասին: Պատմական գիտությունների թեկնածու Կ. Հաֆադարյանը հաղորդեց Դվինի պեղումների արդյունքների

մասին: Պատմական գիտությունների թեկնածու Մ. Պանիչկինան զեկուցեց Հայաստանի ստորին պալեոլիթի մասին, ճարտարապետական գիտությունների թեկնածու Վ. Հարությունյանը՝ Հայաստանի պատմական հուշարձանների պահպանության աշխատանքների մասին, պատմական գիտությունների թեկնածու Բ. Առաքելյանը՝ Հայաստանի քանդակագործության հուշարձանները 4—7-րդ դարերում թեմայով:

ՍՍՏ Միության Գիտությունների Ակադեմիայի թղթակից-անդամ Ե. Ամիրանյանը զեկուցում կարդաց վրացական միջնադարյան որմնակարչության մի քանի հուշարձանների մասին: Վրաստանի հնագույն մայրաքաղաք Մցխեթի պեղումների մասին զեկուցումներով հանդես եկան հնագետ Ա. Կալանտաձեն (Սամ. տավրյի նեկրոպոլի պեղումների մասին), ճարտարապետ, Սովետական Միության հերոս, Ի. Ջիգիշվիլին (հին Վրաստանի ճարտարապետությունն ըստ Բագինեթայի պեղումների) և Ա. Զավախաշվիլին, որը խոսեց Մցխեթում հայտաբերված ոսկե իրերի պատրաստման տեխնիկայի մասին: Հնագետ Ն. Խոշտարիան զեկուցեց Խոթի գետի (Կոլսիդա) ավազանի հետնագույն բնակավայրերի ուսումնասիրության արդյունքների մասին, դրամագետ Դ. Կապանաձեն Ակիի ստատուների (դրամ) լուկայիզացիայի մասին և այն կարծիքը հայտնեց, թե նրանք պետք է կոլսիդական ժազում ունենան: Սոլովյովը զեկուցեց Անիսիայի մոտ (Ար. խազիա) հայտաբերված քարե դործիքների մասին:

Պատմական գիտ. թեկնածու, «Նազետ Զա-
ֆար Զադեն կարգաց երկու զեկուցում» Ազգա-
րեչանական ՍՍԻ-ում՝ սովետական շրջանում
կատարված տեղումների արդյունքների մասին
և Բաքվի ժողախորշի հնագիտական ուսումնա-
սիրությունների մասին: Պատմական գիտու-
թյունների դոկտոր, հնագետ, դրամագետ Ա.
Պախումովը խոսեց Ազգրեչանի՝ Սասանյան
շրջանի հուշարձանների մասին, հնագետ Կա-
զիևը՝ Մինգեչաուրի պեղումների արդյունքների
մասին, հարտարապետ Գ. Իոսեևը՝ Մինգեչաու-
րի թրժման վառարանների մասին:

Հյուսիսային Կովկասի հնագիտության
հարցերի վերաբերյալ զեկուցումներով լանդես-
եկան Հյուսիսային Կովկասի հնագիտության
աշխի բեկեղող ուսումնասիրողներ Ա. Իեսսենը
(Լենինգրադ), Ս. Կրուպնովը (Մոսկվա), Լափ-
բովը (Լենինգրադ), Ամֆիմովը (Կրասնոդար),
Շեվցովան (Զաուչիկաու):

Սեփախում դրսևորվեց սովետական հնա-
գիտության և մասնավորապես կովկասագիտու-
թյան աճն ու բարձր մակարդակը: «Սեփախում
կարգացված 37 դիտական զեկուցումների մեջ,
ասված է սեփախի բեկունած բանաձևում.—
դրսևորվեց սովետական կովկասագետների աշ-
խատանքների տեսական և մեթոդական բարձր
մակարդակը, աշխատանքներ, որոնք բացա-
հայտեցին Անդրկովկասի ժողովուրդների պատ-
մության առաջ անհայտ էպոխաները, և որոնք
սովետական հնագիտությունը բարձրացրին
գիտական իմացության էլ ավելի բարձր մա-
կարդակի վրա: Սեփախ նշեց կովկասագիտա-
կան կադրերի աճը: Այդ կադրերը Վրաստա-
նի, Հայաստանի և Ազգրեչանի Գիտություննե-
րի Ակադեմիայի ղեկավարությամբ ուսումնա-
սիրում են Անդրկովկասի ժողովուրդների
պատմության և կուլտուրայի բազմազան հար-
ցերը: Սեփախ նշեց նաև այն արժեքավոր գի-
տահետազոտական աշխատանքը, որ կատարում
են Լենինգրագի և Մոսկվայի գիտնականներն
Անդրկովկասում:

Անդրկովկասի հնագիտության ուսումնա-
սիրման գծով կատարվող աշխատանքները վեր-
ջին 15—20 տարիներում, ջնոհհիվ բուլնիկների
պարտիայի և սովետական կառավարության
հոգատարության, ընթացել են խոշոր մաս-
շտաբներով և սխտեմատիկաբար:

Շնորհիվ այդ պեղումների, այժմ մեծ
նյութ է կուտակվել Անդրկովկասի բեկեղների
պատմության բոլոր ժամանակաշրջանների վե-
րաբերյալ, սկսած մարդու կյանքի ամենավաղ
շրջանից մինչև միջին դարերը: Ըստ որում
հայտաբերվել են հարուստ նյութեր մինչև վեր-
ջերս Անդրկովկասում անհայտ հին քարե դարի
և պղնձի էպոխայի վերաբերյալ: Հին քարե
դարի գործիքներ հայտաբերվեցին Թալինի

շրջանի Արտին (Թուրքիա) լեռան, Արզնիի,
Նուսեուսի շրջակայքում (Հայաստան), Ինչպես
և Անախվայի մոտերքը և Արխազական ԱՍՍԹ-
այլ վայրերում: Դրանով ժխտվեց եվրոպական
հնագետների այն տեսությունը, որով բացա-
վում էր հին քարե դարի առկայությունն Ան-
դրկովկասում: Շեգավթում (Նրևանի մոտ,
և Թրիալթիում (Վրաստան) կատարված պե-
ղումներով հայտաբերվեց պղնձի էպոխան
և Անդրկովկասում:

Կուտակված հնագիտական նյութերն ար-
դեն հնարավորություն են ապրիս հավասանելու
Անդրկովկասի բեկեղների պատմության և նյու-
թական կուլտուրայի հաջորդական զարգացումն
ու պրոգրեսը:

Հնագետ-կովկասագետների առջև խըն-
դիրներ են ծառացած՝ շարունակել և զարգաց-
նել Մադի և նրա շեղայի լավագույն տրագի-
ցիաները, հարստացնել մեր իմացությունները
Անդրկովկասի բեկեղների և ժողովուրդների
պատմության և կուլտուրայի վերաբերյալ,
սխտեմատիկաբար ուսումնասիրել իրար հա-
ջորդած պատմական էպոխաները և լուծել Ան-
դրկովկասի ժողովուրդների պատմության ու
կուլտուրայի մի շարք պրոբլեմները: Այս խըն-
դիրների հաջող լուծման համար անհրաժեշտ է
կովկասագիտական ուժերի համախմբվածու-
թյունը և Հայաստանի, Վրաստանի, Ազգրեչա-
նի, Ինչպես և Մոսկվայի ու Լենինգրագի գիտ-
նականների գործակցությունն իրար հետ:

Սեփախ որոշեց էլ ավելի ամրապնդել կա-
պը և համագործակցությունը կովկասագետ-
ների միջև: Այդ նպատակով սեփախ որոշեց՝
ամեն տարի գումարել կոնֆերանսներ, որտեղ
հնարավոր կլինի համախմբել Անդրկովկասի և
Հյուսիսային Կովկասի հնագիտության բնա-
գավառում աշխատող գիտնականներին, հրա-
վիրելով այդ կոնֆերանսները Անդրկովկասյան
ոնսպորիկաների մայրաքաղաքներում, Մոսկ-
վայում և Լենինգրադում:

Հարց բարձրացվեց ՍՍԻ Միության Գի-
տությունների Ակադեմիայի առաջ, որպեսզի
Գիտությունների Ակադեմիայի նյութական կուլ-
տուրայի պատմության ինստիտուտին կից
կազմակերպվի Կովկասի հնագիտության և
նյութական կուլտուրայի ուսումնասիրության
հանձնաժողով, որի խնդիրների մեջ մտնեն
կատարված աշխատանքների փոխադարձ ին-
ֆորմացիա, համատեղ հնագիտական աշխա-
տանքների կատարում, աշխատությունների
հրատարակություն և գիտական կոնֆերանս-
ների հրավիրում:

Այժմ Անդրկովկասի յուրաքանչյուր ուս-
պուրիկայում, առանձին վերցրած ստեղծված
են բոլոր հնարավորությունները կովկասագի-
տական հարցերի ինքնուրույն հետազոտման

